ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՆՏԻՈՔԻ ԴՊՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1098-1112 ԹԹ.

XI դ. շատ բաներով շրջադարձային եղավ ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ ողջ Մերձավոր Արևելքի կյանքում: Բյուզանդական նվաճումներն Անդրկովկասում /1021-1061թթ./ ավարտվեցին սելջուկներից 1071թ. Մանազկերտում կրած պարտությամբ, որից հետո քայլ առ քայլ Բյուզանդիան կորցրեց իր դիրքերը ոչ միայն նվաճված երկրներում, այլ նաև դարերով նրան պատկանած Մերձավորարևելյան տարածքներում: Սակայն ամենածանրը Դաշտային Կիլիկիայի կորուստն էր, որի տարածքը Տարսոն, Ադանա, Մսիս և Անարզաբա քաղաքներով հնագույն ժամանակներից նշանակալի դեր էր խաղում Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում: Նրա նավահանգիստներով և Կիլիկիան Տավրոսի լեռնանցքներով անցնում էին միջազգային առևտրի կարևոր ուղղիներ[1]:

Մինչև XI դ. 70-ական թթ. Կիլիկիան մտնում էր Բյուզանդիայի կազմի մեջ, բայց Մանազկերտի ադետից հետո այն անցավ Արևելքի դոմեստիկոս Փիլարտոս Վարաժնունու /1070-ական-1086թթ./ իսկողության տակ: 1084թ. Դաշտային Կիլիկիան նվաճվեց Ռումի սելջուկյան սուլթանության կողմից, իսկ նրա լեռնային մասում այդ նույն ժամանակ կազմակերպվեց Ռուբինյանների հայկական իշխանությունն: Ավելի ուշ՝ խաչակրաց առաջին արշավանքի /1096-1099թթ./ արդյունքում, տեղի հայերի աջակցությամբ[2] Ասորիքում և Միջագետքում կազմակերպված Եդեսիայի կոմսությունը /1098թ. մարտ/ և Անտիոքի դքսությունը /ավելի ճիշտ արինցիպատ, 1098թ. հունիս/, նույնպես հավակնություններ ցուցաբերեցին Դաշտային Կիլիկիայի նկատմամբ: Վերջիններիս հավակնությունները հիմնված էին այն փաստի վրա, որ 1097թ. աշնանը Բալդուին Բուլոնացու և Տանկրեդի ջոկատները Տարսոնից, Ադանայից և Մսիսից դուրս քշեցին սելջուկյան կայազորները և այդ քաղաքներում թողեցին ֆրանկ կայազորներ, իսկ մեկ տարի անց Անտիոքի դուքս Բոհեմունդ Տարենտացու /1098-1111թթ./ արշավանքի արդյունքում այդ քաղաքները ճանաչեցին նրա գերիշխանությունը և մտան նորաստեղծ Անտիոքի դքսության կազմի մեջ[3]: Դրանով խախտվեցին կայսր Ալեքսիոս Կոմնենոսի /1081-1118թթ./ և խաչակիր առաջ-

[1] Г. Микаелян,История Киликийского Армянского государство,Ер.1952,с.10-12.
[2] Жан Ришар,Латино-Иерусалимское королевство,СПБ.2002,с.51.
[3] Լևոն Տեր-Պետրոսյան,Խաչակիրները և հայերը,Հ-Ա,Եր.2005,էջ 32.

նորդների միջև եղած Կոստանդնուպոլսի համաձայնության պայմանները, որոնք ենթադրում էին կայսրությանը վերադարձնել խաչակիրների կողմից նվաճված բոլոր նախկին բյուզանդական տարածքները[4]:

Եդեսիայի կոմսության և Անտիոքի դքսության ստեղծումն ուղղակի հակասում էր այդ տարածքների նկատմամբ կայսրության իրավունքների ճանաչմանը: Այն երկարատև պայքարի պատճառ դարձավ Բյուզանդիայի և այդ երկրների միջև, որի առանցքում Դաշտային Կիլիկիայի համար մղվող բյուզանդա-անտիոքյան հակամարտությունն էր:

Ռուբինյանները նույնպես ձգտում էին դուս գալ դեպի նավահանգիստներ, բայց դրա համար չունենալով իրական ուժ, նրանք խուսանավում էին Բյուզանդիայի և Անտիոքի միջև՝ ամեն անգամ կողմնորոշվելով դեպի այն պետությունը, որն այդ պահին վերահսկում էր Դաշտային Կիլիկիան:

Այս հակամարտությանը մասնակցում էր նաև Քեսունի և Ռապանի տեր Գող Վասիլը /1082-1112թ./, որն իր եղբայր Բագրատի հետ գործում էր Բոհեմունդի կողմում՝ երբեմն ստանալով պատժիչ հարվածներ նրա մրցակից այլ խաչակիր իշխանների կողմից[5]:

Պարզ է, որ Բյուզանդիան չէր համակերպվում Դաշտային Կիլիկիան ֆրանկներին զիջելու մտքի հետ, ուստի 1099-1100թթ.[6] կայսրական զորքերը Վուտումիտոսի և Մոնաստրոսի գլխավորությամբ անցնում են հարձակման և ետ գրավում Դաշտային Կիլիկիան Կոռիկոսով և Սելևկիայով հանդերձ[7], ապա ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող, Անտիոքի դքսության և Լեռնային Կիլիկիայի Ռուբինյան /որոնք հավանական է այդ ժամանակ ընդունում էին կայսրության գերիշխանությունը[8]/ իշխանության սահմանին գտնվող Մարաշի շրջանը, որտեղ որպես ներկայացուցիչ թողնվում է հայազգի Թաթուլը: Միարժամանակ Կուրիկ և Սելևկիա է ուղարկվում ներքինի Եվստաֆին՝ հանձնարարություն ունենալով շուտափույթ գբաղեցնել Կուրիկը, վերանորոգել այն Սելևկիայի հետ և այնտեղ թողնել մեծ քանակությամբ զորք[9]: Բոհեմունդն իր հորեղբորորդի Ռիչարդի հետ 1100թ. փորձում է ետ նվաճել Մարաշը, բայց

---

[4] Հ.Դոմանին,Крестивые походы,М.2008,с.111-112.

[5] Կ.Սուքաֆյան,Կիլիկիա.Եր 2001.էջ 362.

[6] Հիշյալ իրադարձությունների թվագրման հարցի շուրջ տես Я.Любарский,Замечания к хронологии XI книги "Алексиады" Анна Комненой,ВВ,/Византийский Временник/,Т.23, М.1963, с.47-56.

[7] Анна Комнина,Алексиада,М 1965,с.313.

[8] В.Степаненко,Равнинная Киликия взаимоотношениях Антиохийского княжесыва и княжества Рубинидов в 10-40-х годах XII в.,ВВ,Т.49,М.1988,с.120.

[9] Анна Комнина,Алексиада,с.315.

"իշխանաց իշխան" տիտղոսը կրող Թաթուլը դիմադրում է վերջինիս և նա բավարարվում է միայն Մարաշի շրջակայքը գրավելով[10]:

Բյուզանդիայից բացի Բոհեմունդի թշնամիներն էին նաև Դանիշմանյան ամիրաները, որոնց դեմ պայքարը ևս նպաստում էր հայ իշխանների հետ մերձեցմանը: Այսպես, Սեբաստիայի Դանիշանյան ամիրա Մելիք-Ղազիի /1084-1134թթ./ հավակնություններից 1100թ-ի ամռանը պաշտպանվելու համար Մելիտինեի հայազգի կառավարիչ Գաբրիելն /1082-1103թթ./ ապավինում է Բոհեմունդին: Նրանց համագործակցությունն իրական հիմք պետք է ստանար Գաբրիելի դստեր Մորֆիայի ու Բոհեմունդի ամուսնությամբ[11]: Օգնություն խնդրանքը համնկավ Մարաշի պաշարման թեժ պահին[12], բայց Սեբաստիայի Դանիշմենդի դեմ օգնության փոխարեն հայ իշխանը _խոստանում էր Բոհեմունդին հանձնել Մալաթիան: Նման առաջարկից Բոհեմունդը չէր կարող հրաժարվել: Հանելով Մարաշի պաշարումը՝ Անտիոքի իշխանը ոչ մեծ թիկնազորով /մոտ 300 ասպետ և հետևազոր, որի մեջ կային նաև հայեր/ շարժվում է հյուսիս: Նրան ընկերակցում էին իր զարմիկ Ռիչարդ Սալերնացին, և Անտիոքի ու Մարաշի հայ եպիսկոպոսները՝ Կիպրանոսն ու Գրիգորիսը: Սակայն դեռևս Մալաթիայի կես ճանապարհին Բոհեմունդն ընկնում է Դանիշմենդի պատրաստած ծուղակը և իր բազմաթիվ ասպետների ու Ռիչարդի հետ գերվում է: Կոտորվում է նաև Բոհեմունդի կողմում կռվող հայկական զորաբանակը եպիսկոպոսների հետ միասին[13]: Կա կարծիք, որ հատկապես Բոհեմունդին օգնության կանչելը կապված էր այդ պահին այլ խաչակիր առաջնորդներից նրա Մելիտինեին ամենամոտը գտնվելու հետ[14], սակայն չի բացառվում նաև, որ նրա գերվելը նուրբ ռազմաքաղաքական խաղ էր: Բանն այն է, որ Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիակի հայ իշխաններին չէր կարող չանհահգստացնել Անտիոքի արագ աճող հզորությունը: Հյուսիսային Ասորիքի գրավումից հետո, մանր հայկական իշխանությունների միացումը հզորացող Անտիոքին դառնում էր ժամանակի հարց[15], իսկ համաձայն հայտնի արտահայտության՝ "ում կողմում էլ որ կռվեն հայերը, նրանք միշտ կռվում են միայն սեփական ազատության համար"... Ավելացնենք, որ Գաբրիելը հունադավան էր, ուստի կարող էր

---

[10] Մ.Ուռհայեցի,Ժամանակագրութիւն,Վաղարշապատ 1898,էջ250-252.
[11] Ասորական անանուն ժամանակագրություն, թարգ.Տեր-Պետրոսյան, Եր. 1982, էջ41.
[12] В.Степаненко,Мараш и графство Эдесское в Девольском договоре 1108г.,ВВ,Т.48, М.1987, с.56-57.
[13] Ե.Քասունի,Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձավոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մեջ,Պեյրութ 1974, էջ 79.
[14] В.Степаненко,Мараш и графство Эдесское в Девольском договоре 1108г.,ВВ,Т.48,с.57.
[15] А.Доманин,Крестивые походы,с.182-183.

ունենալ բյուզանդական կողմնորոշում և օգնել կայսրությանն ազատվելու իր ախոյանից[16]:

Գերության ընթացքում, հնարավոր է, Բոհեմունդը դարձել է Մելիք-Ղազիի քաղաքական խորհրդատուն և ուսուցիչը: Մելիք-Ղազին լավ էր հասկանում իր պատանդի արժեքը, մյուս կողմից նա նման չէր այն թուրք առաջնորդներին, որոնք ավերում և ոչնչացնում էին այն ամենն ինչն իալամից դուրս է: Նա հենվում էր կրոնական հադուրժողականության, հումանական գրի անձեռնմխելիության սկզբունքի վրա և մեծ դեր ուներ Առաջավոր Ասիայում[17]: Երբ Բյուզանդիան նրան փրկագնելու առաջարկ արեց, ապա Մելիք-Ղազիից ստացավ հսկայական՝ 260.000 դինար գումարի պահանջ[18]: Հույները պատրաստ էին ցանկացած զոհողության, միայն թե ազատվեին իրենց ոխերիմ թշնամուց, բայց այստեղ Բոհեմունդին փրկեց անսպասելի մի հանգամանք. Մելիք-Ղազին և Իկոնիայի Ռումի սուլթան Ղլիճ-Արսլանը /1092-1107թթ./ բախվեցին իրար փրկագինը կիսելու հարցում, իսկ Բոհեմունդը նրանց "բացատրեց", որ Ալեքսիոսը, վերցնելով իրեն, կազատվի ուժեղ և վտանգավոր հակառակորդից ու կուղղի իր ուժերը նրանց դեմ: Նա նաև խոստացավ միանալ թուրքերին Բյուզանդիայի դեմ պայքարում: Եթե մինչ այդ Բոհեմունդն իրեն դրսևորել էր որպես տաղանդավոր զորավար, ապա այժմ նա փայլեց որպես հանճարեղ դիվանագետ: Նրա մտքի ճկունության և հնարամտության մասին խոսում է նույնիսկ թշնամին՝ արքայադուստր Աննան, շեշտելով, որ այդ մարդն իր որակներով զիջում է միայն Ալեքսիոս կայսրը[19]:

Բոհեմունդի փրկագնմանը մասնակցելու պատրաստակամություն հայտնեց նաև Գող Վասիլը[20]: 1103թ. ամռանը Բոհեմունդն ազատվեց: Մինչ այդ, Անտիոքի դքսության ռեգենտ /խնամակալ/ Տանկրեդը /1101-1103,1104-1112թթ./ ռազմական գործողություններ էր սկսել Բյուզանդիայի դեմ և գրավել Մսիսը, Ադանան և Տարսոնը, իսկ 1002թ. կեսերին, Լաոդիկիան[21]: Շարունակելով Տանկրեդի քաղաքականությունը՝ Բոհեմունդը 1104թ. գարնանը Եդեսիայի կոմս Բալդուին II Բուրգցու /1100-1118թթ./, նրա վասալ Ժոսլեն Կուրտենեի և հայ աշխարհազորայինների հետ հարձակվեց Մոսուլի աթաբեկ Շամս ադ-

---

[16] Լևոն Տեր-Պետրոսյան,Խաչակիրները և հայերը,Հ-Ա,էջ 224.
[17] Ф.Успенский,История крестовых походов,М.2001,с.347-348.
[18] П.Виймар,Крестовые походы,СПБ 2002г., с.148.
[19] Анна Комнина,Алексиада,с.362-363.
[20] А.Доманин,Крестивые походы,с.184.
[21] П.Виймар,Крестовые походы,с.146.

Զեկերմիշի /1102-1106թթ./ վրա[22], բայց Խարրանի մոտ պարտություն կրեց, իսկ Բալդուինը և Ժոսլենը գերվեցին[23]: Այս պարտությունը լրիվ փոխում է տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը: Բոհեմունդը և Տանկրեդը հաստատվում են Եդեսիայում ու փորձում այն միացնել Անտիոքին: Սակայն ապարդյուն, քանի որ Անտիոքի դքսությունն ինքն ընկավ ծանր դրության մեջ: Բանն այն է, որ Խարրանից հետո ակտիվացան Ասորիքի մահմեդականները և Բյուզանդիան: Վերջինիս հաջողվեց նորից ետ գրավել "...Լոդգինիադան /անմիջապես Անարզաբայի հարևանությամբ/, Տարսոնն, Ադանան, Մսիսը և ողջ Կիլիկիան..."[24]: Մի շարք հետազոտողներ /Պ. Վիյմար/ հենվելով Ռադուլֆ Կանենցու հաղորդագրության վրա այն կարծիքին են, որ այդ քաղաքների բնակիչներն իրենք են ընդվզել և քշել ֆրանկներին: Համենայն դեպս փաստ է, որ 1104թ. հայերը Հալեպի էմիր Ռիդվանին /1095-1113թ./ հանձնեցին Արտախ ամրոցը՝ Անտիոքին գցելով լուրջ իրավիճակի մեջ[25]: Ստեղծված ծանր վիճակը Բոհեմունդին ստիպեց 1104թ. աշնանը մեկնել Եվրոպա՝ արևմուտքից Բյուզանդիայի դեմ օգնություն ստանալու համար: Սակայն 1108թ. պարտություն կրեց և սեպտեմբերին Ալեքսիոս կայսեր հետ կնքեց Դեաբոլի պայմանագիրը, որով նա իրեն ճանաչեց կայսեր վասալ: Նա պարտավորվում էր "...չհամգործակցել որևէ մեկի հետ, որը թշնամական վերաբերմունք կունենա կայսրության հանդեպ...": Պայմանագրում հստակ նշված էր, որ այն հայաբնակ հողերը /նկատի էր առնվում Եդեսիայի կոմսությունը/, որտեղ կիշխի Բոհեմունդը, համարվելու են ոչ ավելին քան կայսրության նվիրատվություն, իսկ եթե "...ծառայության նպատակով հայերից նրա մոտ գան ինչ որ մարդիկ, ապա Բոհեմունդը նրանց չպետք է ընդունի...: Անտիոքի իշխանության մեջ, որը նրա մահից հետո անցնելու էր կայսրությանը, մտնելու էին Արտախը, Սևքարը, Պազրան /Բաղրաս/ և նրանց ստորոտում գտնվող ամբողջ հարթավայրը, բացի կայսեր վասալներ Լևոն և Թորոս Ռուբինյանների տիրույթներից: Դաշտային Կիլիկիայի մեծ մասը՝ Տարսոն, Ադանա, Մսիս և Անավարզա քաղաքներով, անցնում էր Բյուզանդիային..."[26]:

Թորոսին /1100-1129թթ./ և Լևոնին /1129-1137թթ./ կայսեր վասալներ համարելու հիմքում ընկած է ոչ թե նրանց բյուզանդական կոչումներն ու պայմանագրում որպես հպատակ հիշատակելն, այլ կայսրության հետ նրանց

---

[22] Е.Гуринов, Графство Эдесское и мусульманские государства,2008г.,www.tepliers info/web/a01.php?page=080713a.
[23] Մ.Ուռհայեցի, Ժամանակագրութիւն,էջ 254.
[24] Анна Комнина,Алексиада,с.318.
[25] П.Виймар,Крестовые походы,с.149.
[26] Анна Комнина,Алексиада,с.365-372.

իշխանության ընդհանուր սահմանների առկայությունը և բյուզանդական զինվորական ներկայությունը վերջիններիս ամրոցներում[27]: Հայերի և Բոհեմունդի համագործակցությունը կանխելու նպատակով արված հատուկ նշումը, պատահական չէր, քանի որ Բյուզանդիայի ռազմական հզորությունն, Անտիոքի դքսությունից ու Ռումի սուլթանությունից եկող վտանգը ստիպում էին Թորոսին և նրա հաջորդներին ժամանակ առ ժամանակ ընդունել Բյուզանդիայի գերագահությունը, սակայն դա շատ երերուն էր և Բյուզանդիայի ցանկացած թուլացումը դրդում էր Ռուբինյաններին անցնելու Անտիոքի կողմը: Նման հակաբյուզանդական միություն կազմվել էր մոտ 1100թ. [28]: Կան նաև Անտիոքի հետ ավելի ուշ շրջանում /օրինակ 1116թ./ կազմված միություններ[29]:

Ուշագրավ է նաև պայմանագրում Թորոսի և Լևոնի անունների առանձին նշումն, ինչը, հավանական է, փաստում է այն վարկածը, որ դեռևս 1100-1103թթ. նրանք իշխանությունը բաժանել են իրար մեջ:

Սակայն Դեսբրոլի պայմանագիրը չիրագործվեց նույնիսկ մասամբ և պայքարի հերթական՝ 1108-1009թթ. փուլից հետո, Դաշտային Կիլիկիան երկար ժամանակով անցավ Անտիոքի իշխանությանն[30]: Այստեղ Տանկրեդին "օգնության" հասավ Բոհեմունդը, որի ոտնձգությունը Բալկաններում չեզոքացնելու նպատակով Բյուզանդիան ստիպված էր Տարսոնից կանչել Մոնաստրոսին, իսկ Լաոդիկեայից Կանտակուզինոսին[31]:

---

[27] Հիմնախնդրի հետ կապված մանրամասներ տես Լևոն Տեր-Պետրոսյան,Խաչակիրները և հայերը,Հ-Բ,Եր.2007,էջ 95-96.

[28]Այս թվականի վերաբերյալ կան տարակարծություններ, քանի որ գիտնականների մեծ մասը /Ֆ.Շալանդոն,Կ.Կաէն,Ռ.Գրուսսե,Յա.Լյուբարսկի/ համոզված է, որ Աննա Կոմնենան շփոթում է 1099-1100թթ. և 1103-1104թթ. իրադարձությունները՝ դրանց համանմանության ու մի շարք մանրամասների անտեղյակության պատճառով /տես Я.Любарский,Замечания к хронологии XI книги "Алексиады" Анна Комненой,ВВ,Т.23,с.47-56 կամ Анна Комнина, Алексиада, с.580,584-586./:

Սեզ հետաքրքրող միությունն Աննա Կոմնենայի շարադրանքում նախորդում է Վուտումիտոսի արշավանքին՝ այսինքն պետք է տեղադրել 1099-1100թ. միջև, սակայն այն նշվում է որպես միություն Տանկրեդի հետ որն էլ շփոթ է առաջացնում, քանի որ Տանկրեդն Անտիոք է եկել Բոհեմունդի գերվելուց՝ 1100թ. օգոստոսից, ոչ շուտ: Ուստի այն կարող է տեղ գտած լինել ավելի ուշ՝ 1103 կամ 1104թթ., երբ ըստ Աննայի Կիլիկիան վերստին վերագրավվեց Մոնաստրոսի կողմից, բայց այստեղ էլ բացակայում է Վուտումիտոսի անունը: Հաշվի առնելով այս հանգամանքները կարող ենք փաստել միայն, որ հայ-անտիոքյան միություն հաստատվել է մինչև 1104թ.:

[29] В.Степоненко,Из истории международных отношений на Ближнем востоке в XII в. Княжество Васила Гоха и Византия, АДСВ./Античная Древность и Средние Века/,Свердловск 1980, с.44.

[30] А.Шорохов,В.Степаненко,К хронологии византийско-антиохийской борбы за Равнинную Киликию.1098-1108гг.,АДСВ,Свердловск 1983,с.108-109.

[31] В.Степаненко,Мараш и графство Эдесское в Девольском догворе 1108г.,ВВ,Т.48,с.59. Ս՝՝՝ Г.Микаелян,История Киликийского Армянского государство, с.94-95.

Ըստ Շալանդոի, Դաշտային Կիլիկիան մնացել է Անտիոքի իշխանության տակ մինչև XIII դ. 30-ական թթ. /չբացառելով, սակայն, որ երբեմն նրա մի մասը անցել է Ռուբինյանների հսկողության տակ[32]/: Սա հաստատում է նաև Դամասկոսյան Տարեգրությունը, որի հեղինակ Ալ-Կալանիսին հիջրայի 503թ. /1109թ. հուլիսի 31-ից -1110թ. հուլիսի 19/ տակ արձանագրում է. "...Տանկրեդը դուրս գալով Անտիոքից՝ ուղղվեց Անատոլիայի սահմանն ու գրավեց Տարսոնը շրջակա հողերի հետ՝ այտեղից դուրս քշելով հունաց թագավորի ներկայացուցիչներին..."[33]: Աննա Կոմնենան նույնպես 1107-11108թթ. տակ նշում է Տանկրեդի հարձակման և Մսիսի ստրատոպեդարխոս Ասպիետի /հավանական է Օշին/ վախկոտ պահվածքի մասին[34]: Նա չի խոսում այդ հարձակման արդյունքների մասին, բայց Ասպիետի նման պահվածքի նկարագրության պատճառ կարող է լինել միայն նրան վստահված տարածքների կորուստը: Սա ընդունում է նաև L. Տեր-Պետրոսյանը՝ նշելով, որ Տանկրեդը 1104-1107թթ. ընթացքում վերագրավվել է անդրորոնտյան բոլոր հողերը, Լաոդիկիան և Մսիսը[35]: Փոխարենը Ռ Գրուսսեն գրում է, որ Լևոն Ա 1132թ. Տարսոնն, Ադանան, Մսիսը գրավել է Բյուզանդիայից, որը վերագրավվել էր դրանք 1104-1108թթ., իսկ Գի դե Շեվրիի Մսիսի իշխան և Ռաուլ դե Դոմֆրոնտի Մսիսի արքեպիսկոպոս տիտղոսները, հավանաբար պահպանվել են քաղաքի կորստից հետո"[36]:

Տանկրեդի հաջողությունները Կիլիկայում 1107-1108թթ. ապացուցվում է և նրանով, որ Տարսոնի գրավումից հետո նա հնարավոր է վերցրել է նաև Կուրիկը[37]: Համենայն դեպս այն որպես Անտիոքի իշխանության մաս ներկայացված է 1134թ. հիվանդախնամների միաբանության մի փաստաթղթում[38], բացի այդ, 1108թ. Տանկրեդի կողմից նոր գրավված Լաոդիկիայում պիզանցիներին թաղամաս պարգևող խարտիան հաստատող վասալների ստորագրությունների ցանկում առկա են Տարսոնի եպիսկոպոս Ռոգերիուսի և Մսիսի արքեպիսկոպոս Ռաուլի անունները: Հայտնի է նաև 1111թ. Տանկրեդի կոչով հավաքված նրա վասալների ցուցակը, որը պահպանվել է Ալբերտ Ախենացու մոտ: Նրանց մեջ հիշատակված են Տարսոնի և Մսիսի իշխան Վիդո Կառնելիոսին և եպիսկոպոս Ռոգերիուսը[39]: Նույն հեղինակը 1111թ. դեպքերի շարադրման

---

[32] www.hist.msu.ru/Byzantine/BB/1988/120pdf.
[33] Ибн-Каланиси,Дамасские хроники,М.2009г., с.72.
[34] Анна Комнина,Алексиада,с.322-323.
[35] Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Հ-Ա, էջ 57-58.
[36] www.hist.msu.ru/Byzantine/BB/1988/121pdf.
[37] В.Степаненко,Цицилия "дама Тарса и сестра кораля",ВВ,Т.51,М.1991,с.122.
[38] В.Степаненко,Равнинная Киликия... в 10-40-х годах XII в.,ВВ,Т.49, с.120.
[39] www.hist.msu.ru/Byzantine/BB/1988/122pdf.

ժամանակ Լևոնին /որը նշված է հայ իշխաններ Գող Վասիլի, նրա եղբայր Բագրատի և Լամբրոնի հավանական իշխան Օշինի հետ/ ևս հիշատակում է Տանկրեդի վասալների շարքում: Ու չնայած այս հագամանքը կասկածելի է, քանի որ այդ ընթացքում Ռուբինյանները հասցրել էին հզորանալ, որի ապացույը 1111թ. Կիզիստրա ամրոցի գրավումը և հայկական իշխանության սահմանները հյուսիսում մինչև Կապադովկիա հասցնելն է[40]: Այնուամենայնիվ, դեպի Անտիոք կողմորոշման օգտին խոսում է 1118թ. Ազազի գրավման ժամանակ Ռոժեր Անտիոքցու կողմում Լևոնի ներկայությունը[41]:

Այս փաստերն ապացուցում են, որ 1108թ.-ից մինչև 1132թ. Դաշտային Կիլիկիայի մի մասը եղել է Անտիոքի դքսության մաս, որի սահմաններն անցել են Մարաշով, որը մտել է դքսության կազմի մեջ 1109թ. Տրիպոլիի միջնորդական դատարանի որոշմամբ, Ջահան գետով՝ մինչև Անարզաբայի մոտակայքի ակունքներն, այնուհետև Տավրոսի նախալեռներով մինչև Կիլիկիան դռները վերահսկող Պոդանդ ամրոց: Ռուբինյաններին պատկանել է Լեռնային Կիլիկիան և Անարզաբայի շրջանը[42]:

Անտիոքի դքսության ևս մեկ հայ դաշնակից Գող Վասիլը Բոհեմունդի փրկագնման և որդեգրման դիմաց ոչինչ չստացավ, ուստի 1108թ. անտիոքաեդեսական հակամարտության ժամանակ նա անցավ Բալդուին Բուրգցու կողմը՝ նրան տալով Ռապանում հավաքված այրուձին և Մեքիս քաղաքում տեղակայված պեչենեգների մի զորաջոկատ[43]: Պայքարն ավարտվեց Տանկրեդի հաղթանակով, բայց Գող Վասիլին փրկեց այն, որ Բալդուինի կողմն անցավ նաև Երուսաղեմի թագավոր Բալդուին Բուլոնացին /1100-1118թթ./, որի շնորհիվ էլ 1109թ. Տրիպոլիի միջնորդական դատարանը եդեսիան՝ առանց Մարաշի, վերադարձրեց նրա օրինական տիրոջը:

Տանկրեդի գահակալության վերջերում /1112թ./ նոր բախում է տեղի ունենում Գող Վասիլի հետ: Տանկրեդը գրավում է Ռապանը և առաջանում Քեսուն: Սակայն, հավանաբար վախենալով Քեսուն-Մոսուլ զինակցությունից համաձայնվում է հարցը լուծել խաղաղությամբ և Գող Վասիլին վերադարձնում

---

[40] Մի շարք հետազոտողներ նույնիսկ Անարզաբայի գրավումն են թվագրում 1111թ-ով. տես Ե.Քասունի,Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձավոր Արեւելքի քաղաքական հոլովույթին մեջ,էջ 103.

[41] В.Степаненко,Равнинная Киликиа... в 10-40-х годах XII в.,ВВ,Т.49,с.123.

[42] В.Степаненко,Цилиция "дама Тарса и сестра кораля",ВВ,Т.51,с.123.

[43] Մ.Ուռհայեցի, Ժամանակագրութիւն,էջ 266-267.

Ռապանը, իսկ վորջինս Անտիոքին է հանձնում Հուսունմանսուրը, Թորերը, Ուրեմը[44]:

Եթե մինչև 1104թ. Գող Վասիլի հիմնական ախոյանը հանդիսանում էր Եդեսիայի կոմսությունը, որն իրար հետևից գրավեց Քարքարը, Մելիտինեն, Սերուջը և Մարաշը[45], ապա Խարրանից հետո նա ստիպված էր անցնել Բալդուին Բուրգցու կողմը, քանի որ արդեն Անտիոքն էր հավակնություններ ցուցաբերում նրա հողերի նկատմամբ: Սակայն 1108-1109թթ. դեպքերը չփոխեցին Եդեսիայի կոմսի նախկին քաղաքականությունը, որն էլ դրդեց Գող Վասիլին նորից կողնորոշվել դեպի Անտիոք ու 1111թ. այլ իշխանների հետ միասին օգնել Տանկրեդին սելջուկների դեմ պայքարում[46]: Այս ընթացքում հնարավոր է, որ Վասիլը պահպանած լինի կապերը նաև Բյուզանդիայի հետ, քանի որ նրա հաջորդ Վասիլ Տղան Բալդուինի բռնություններից հետո հեռացավ Կոստանդնուպոլիս:

Գող Վասիլի մահից հետո /1112թ. հոկտեմբեր/ Տանկրեդը հասցրեց կարճ շփում ունենալ նաև նրա ժառանգ Վասիլի Տղայի հետ, որը Տանկրեդի բարեհաճությունը ստանալու համար նրան մեծ նվերներ ուղարկեց, իսկ նրա կնոջը՝ Սեսիլ /Ցիցիլիա/ Ֆրանսիացուն նվիրեց Գող Վասիլի այրու թագը: Ալ-Աքիրի պնդմամբ Տանկրեդը մտադիր էր Գող Վասիլի մահից հետո գրավել նրա իշխանությունը: Համենայն դեպս, նրա ժառանգի նվերները հավանաբար նպատակ էին հետապնդում կանխելու դա[47]: 1112թ. դեկտեմբերին մահացավ նաև Տանկրեդը և նրա ծրագիրը չիրականացավ:

Այսպիսով և Բոհեմեմունդը, և Տանկրեդը լուրջ տեղ էին տալիս հայկական գործոնին եվրոպական նախաձեռնություններում, որի իրական նպատակը ոչ թե մահմեդականության ազդեցությունն Արևելքում թուլացնելն էր, այլ Բյուզանդիայի դիրքերի խարխլումը ...Այստեղ կարելի է նկատել, որ հայ և լատին իշխանների մի մասը սխալվում էր, քանի որ նրանք ավելի մեծ հաջողությունների կհասնեին, եթե միահամուռ ուժերով պայքարեին առաջին հերթին հարևան մահմեդականների դեմ, որոնք օգտվելով քրիստոնյաների անմիաբանությունից և ներքին հակամարտություններից գնալով ավելի էին հզորանում և ի վերջո հաղթանակ տարան:

---

[44] Ե.Քասունի,Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձավոր Արեւելքի քաղաքական հոլովույթին մեջ,էջ 138.
[45] Մ.Ուռհայեցի, Ժամանակագրութիւն,էջ 257-258.
[46] Г.Микаелян,История Киликийского Армянского государство, с.79.
[47] Լևոն Տեր-Պետրոսյան,Խաչակիրները և հայերը,Հ-Ա,էջ 243.